

միածնի Դպրատան բարձրագոյն Դասընթացքը. «Եւ յորժամ միաբանեալ եղբարքն եկին առ Մելիքսէթ վարդապետն եւ սկսան դաս առնուլ, նախ զՔերականութիւնն դաս առին. զկնի նորա զՍահմանքն սկսան եւ ապա զՊորփիւրն, զՍտորոգութիւնն, զՊերիարմենիանն, զԱշխարհացն, զԳովելին (զԱռաքինութեանցն), զկնի սոցա ամենեցուն զԱմենայն ազգաց Տօմարսն» (էջ 399) :

Հազիւ աւարտած էր Մելքիսէթ իւր դասախօսութեան ընթացքը, երբ հիւանդացաւ եւ վախճանեցաւ Երեւան 1632ին : Մելքիսէթի աշակերտներու մէջ նշանաւոր հանդիսացաւ Սիմէոն Զուղայեցի, որ թէեւ հարկադրուեցաւ ընդհատել դասընթացքն եւ մեկնիլ Ասպահան, բայց հոն ինքնուսութեամբ լրացուց թերին եւ կատարելագործեց ուսումը : Տարիներ յետոյ վերադարձաւ Սիմէոն Էջմիածին՝ Փիլիպպոս կաթողիկոսի օրով, ուսուցանելու հոն «արտաքին գիրքերը» :

Երեւանի եւ Էջմիածնի Դպրատուններէն դատ բացաւ Մովսէս կաթողիկոս Դպրատուն մ'ալ Յոհանավանքի մէջ ի Կարբի. ուր եւ ժողվեց բաղմաթիւ մանուկներ, որպէս զի կըթուին, թեքուին մանուկ հասակէն եկեղեցական հրահանգներու մէջ, «եւ մանկունքն անզբաղ եւ անխափան ուսանէին զեկեղեցական ուսումն եւ զԳիրս աստուածաշունչս եւ զիմաստասիրականս» : Դպրոցին բոլոր ծախ-